Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 14

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<10>> հոկտեմբերի 2025թ. ք. Երևան

2025 թվականի հոկտեմբերի 10-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Պ. Գալստյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Մ. Հովհաննիսյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Իրավաբանական վարչության նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնի ավագ իրավաբան:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը: Նիստից բացակայում են հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը և հանձնաժողովի անդամներ Ռ. Այվազյանը և Տ. Գասպարյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 դիմումի քննարկում:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 2 հայտերի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

1. «ՖՈՐՄԱՏ-ԱՎՏՈՄՈՆՏԱԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 22.09.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00010 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց «ՖՈՐՄԱՏ-ԱՎՏՈՄՈՆՏԱԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 22.09.2025թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00010 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից նյութերը՝ լիցենզիայի և ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՖՈՐՄԱՏ-ԱՎՏՈՄՈՆՏԱԺ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

1. Քննարկվեց՝ «ՖՈՐՄԱՏ-ԱՎՏՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2025 թվականի սեպտեմբերի 26-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2025 թվականի սեպտեմբերի 26-ին լիազոր մարմին է ներկայացրել հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Բագրատունյաց պողոտա 2/1 գործունեության վայրում:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՖՈՐՄԱՏ-ԱՎՏՈ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն և 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Քննարկվեց՝

«ԱՎՏՈՋԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2025 թվականի սեպտեմբերի 26-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2025 թվականի սեպտեմբերի 26-ին լիազոր մարմին է ներկայացրել դիմում՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Շիրակի փողոց 11 գործունեության վայրում: Ներկայացված փոստաթղթերում բացակայում էին ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ տեխնիկական զննության համար նախատեսված տարածքների սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայականի պատճենը, ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի ցանկ N 2-ով սահմանված՝ տրանսպորտային միջոցների ղեկային վարման շարժաբերի և կախոցքի վիճակի ստուգման ստենդի և գազաանալիզատորի տեխնիկական պարամետրերը պարունակող տեխնիկական անձնագրերը: 2025 թվականի հոկտեմբերի 9-ին Կազմակերպությունը ի լրումն ներկայացված փաստաթղթերի՝ ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ տրանսպորտային միջոցների ղեկային վարման շարժաբերի և կախոցքի վիճակի ստուգման ստենդի և գազաանալիզատորի տեխնիկական պարամետրերը պարունակող տեխնիկական անձնագրերը, որպե արտադրողի կողմից սարքավորումների փորձաքննության եզրակացություն, սակայն չի ներկայացրել տեխնիկական զննության համար նախատեսված՝ ՀՀ, ք. Երևան, Շիրակի փողոց 11 հասցեում գտնվող տարածքի սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայականի պատճենը և չի վերացրել հայտով ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները ամբողջովին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԱՎՏՈՋԱՆ» ՍՊԸ	0 կողմ, 4 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան